ի վերայ Թրանսիլվանու եպիսկոպոսին, և զմիւսն դատաւորացն Հայոց։ Իսկ երրորդն էր փասափոռթ՝ որ գեղէ ի գեղ և քաղաքէ ի քաղաք տացեն մեզ կառ, մինչ ի ժամանել ի կէրլա։ Եւ պատճառն է զի ոչ գտանի կալէս ի վարձու որ միանգամայն գնայաք ի կէռլայ։ Նաև ոչ իշխանս ի ճանապարհի որպէս Իտալիայ. զի վաճառականքն որք գան և գնան իւրեանց ձիու կառօքն են և պաշարօքն. զկնի Զ աւուրց պարքայով գնացաք ի պատիմու դիմացն Փէստ անուն ղասապա մի, և անտի առաք ընդ մեզ Թարքման մի Թուրքէվար գիտացող որ էր մաճար, և այնպէս գեղէ ի գեղ գնացեալ ժամանեցաք ի կէռլա. բայց ի ճանապարհին կրեցաք զնեղութիւնս ոչ սակաւս մինչ ի մերձենալ հիւանդութեան, զի կառն ոչ ունէր զծածկոցս...։ Երբ հասաք ի կէռլայ մատուցաք իշխանացն զգիր նունցին և զձերն, զոր առեալ սիրով ընկալան և պատուով։ Ապա յետ բազում աւուրց տէր Մինասն որ այժմ է փիօվան ընդ միոյ աղայի ընկերակցեալք ընդ մեզ գնայաք առ ի յարգել զեպիսկոպոսն և մատուցաք նմա զգիր նօնցին որ ըստ դիտման սրբոյ ժողովոյն գրեալ էր նմա, զոր ընթերցեալ յոյժ սիրով ընկալաւ զմեզ, և գրով իւրով կնքեցելով արար զմեզ ինքեան փոխանորդս ի վերայ եկեղեցեացն հայոց, որք են ընդ տէրութեամբ իւրով, և ետ հրաման տալ զգրոչմ մանկանցն հայոց զկնի մկրտութեան այսուհետև, որպէս առնէ սուրբ եկեղեցին. և առնել զձեռնադրութիւնս յեկեղեցիս հայոց և կառավարել զնոսա ուղղափառապէս, և այլն։ Յետ այսորիկ արձակեալք ի նմանէ դարձաք ի կէռլայ, և բնաւք իշխանք տեղւոյս և ամենայն ժողովուրդք հաճեալ հաւանեցան, և ընկալան մեծաւ պատուով հանդերձ ուրախութեամբ, որ և այնուհետև սկիզբն արարեալ քարոզութեան ըստ կարի մերում, և բնաւք ունկնդիր լինին սիրով...։

Գերյարգելութեան քում

Թուին քրիստոսի 1720
յուլիսի 10
ի սուրմուշոյվար

Նուաստագունեղ ծառայ
Յոհան եպիսկոպոս սեբաստեան
որ արդ վերատեսուչ Թրանսիլվանիոյ եկեղեցոյն Հայոց

ԻԱ.

Այս նամակը Հայ հնագէտներուն կը ներկայացնէ հետաքրքրական և օգտակար տեղեկութիւն մը։

Պապերու քաղքին մէջ 1720-ի հոկտեմբերին ձուլուեր է մասնաւոր մետալ մեր Երջանիկ Հօր Ս. Լուսաւորչայ, որու մանրամասն նկարագիրը կը դնէ Ուրբանեան Վարժարանի նախկին աշակերտ Ստեփանոս վարդապետ։ Հետևեալ բացատրութիւնները՝ որ են, «բեպետ գոյ նորին պատկերաւ գառն Աստուծոյ և իւր տիպն», ինչպէս նաև «որոյ և պատկերին նման է ամենեին տիպս այս», յայտնապէս կը ցուցնեն որ եղած է հոն սակայն անկէ առաջ՝ Հայրապետիս առանձին պատկերի տպագրութիւնը, ինչպէս որ անշուշտ կ'ուզենք հասկնալ այսօր ուրիշ սրբազան փոքր պատկերներու մասին։

Գերյարգելի Հայր և Տէր Վերապատուելագունեղ

... Յետ այսորիկ և զայս ծանիր գերյարգելի, զի այն երգրումեցի մարմնաւոր աչօք կոյր յովսէփն ի վաղնջուց եհաս ի Հռոմ և նախ հանդիպեալ էր յալիկօռնայ. այժմ սակայն ոչ է աստ, քանզի ելեալ գնաց յանապալի վասն ուխտի որ ի պատիւ սուրբ նշխարացս Լուսաւորչին մերոյ, և անտի շուտով վերստին յայսր դառնալոց է. և ես իսկ ըն բազումս տեսեալ ծանեայ որ իրաւի յոյժ լաւ անձն էր։ Ապա և Թոխաթեցի այն ուխտաւորն, որ չուեալ է անդէն, դեռ ևս ոչ եհաս յայսր, և յորժամ հասանիցի և տեսանիցեմ զառաքեցեալ մետալն, յօժարաբար ծառայեցից գերյարգելութեանդ առբերելով